ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 օգոստոսի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

123
(2603)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 72

Վարչապետ Նիկոլ Փաշինյանին պատկանող «Հայկական ժամանակ» օրաթերթը (այժմ չի տպագրվում) 2006 թվականի նոյեմբերի 18-ի համարում «Ավանդույթի համաձայն. Հրազդանի ՋԷԿ-ն էլ տվեցին» վերտառությամբ հրապարակման մեջ գրում էր ՋԷԿ-ի վաճառքի գումարով գազի սակագինը սուբսիդավորելու մասին: Կրկին նույն համարում ու կրկին պետական գույքի առուվաճառքի թեմային վերաբերող մեկ այլ՝ «Կրիմինալ գործարք. կթու կովը՝ կաթի գնով» վերնագրով հրապարակումը թերթը եզրափակում է հետեւյալ նախադասությամբ. «Սա ո՛չ տնտեսական եւ ո՛չ էլ քաղաքական գործարք է: Սա կրիմինալ գործարք է, որի մեղավորներին ապագայում դատելն իրավական տեսանկյունից ոչ մի դժվարություն չի ներկայացնելու: Դատվելու են»:

Դատվողներ, իհարկե, անգամ 2018-ի իշխանափոխության ու հենց իր՝ Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո չեղան: Ավելին՝ Փաշինյանի կառավարությունը նույնպես, ըստ երեւույթին, չդիմանալով պետգույքը յուղոտ գներով մասնավորին վաճառելու գայթակղությանը, շարունակեց «նախկիններ» բռնած գործը: Օրինակ՝ այս տարվա կառավարության հունիսի 9-ի նիստի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ ահռելի քանակությամբ պետական գույք կա, որը ոչ մի եկամուտ ու արդյունք չի բերում երկրին: Նույն օրը կառավարությունը որոշման նախագիծ հաստատեց, որով վաճառքի հանվեց «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքը՝ հարակից տարածքով:

Օրինակներն, իհարկե, միայն «ֆեյքերի» ՊՈԱԿ-ի շենքի մասով չեն ավարտվում: Ու փաստ է, որ ընդդիմադիր Փաշինյանի՝ պետական գույքը մասնավոր ընկերություններին «մի քանի գրոշով» վաճառելու «արատավոր պրակտիկան» արմատախիլ անելու մասին հայտարարությունները լոկ հաճելի ստեր են եղել:

«Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած աղետի ֆոնին իշխանական շատ գործիչներ, կարծես թե, անձնական փիար են կառուցում. մեկը մաքրամաքուր կոշիկներով լուսանկար է հրապարակում, թե անդադար աշխատում են, մյուսը, ձեռքերը երկարացրած, ցուցումներ է տալիս ու ծխահարվում եւ այլն: Բայց ամեատպավորիչը Երեւանի ինքնահռչակ քաղաքապետի, ավելի ճիշտ՝ քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի հայտնությունն էր դեպքի վայրում: Երեկ նա առիթը բաց չթողեց գովազդ անելու եւ հայտարարեց, թե «Սուրմալու»-ի տարածքում է որպես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Երեւանի քաղաքապետի թեկնածու: Այս իրողությունն ու հայտարարությունն արդեն խնդրահարույց են: Ինչու՞. բացատրենք: Նախ՝ դեռ պաշտոնապես ոչ ոք չի հայտնել Երեւանի ավագանու արտահերթ ընտրությունների մասին, իսկ հերթական ընտրություններն էլ հաջորդ տարի են լինելու: Թեկնածու լինելու համար դեռ շատ ժամանակ կա: Մյուս հանգամանքը՝ Ավինյանն իրեն չի կարող հռչակել ամբողջ ՔՊ-ի քաղաքապետի թեկնածու, քանի որ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, ՔՊ կուսակցության վարչության անդամներից նրան ընտրել է միայն կեսը եւ գումարած մեկ ձայն: Բայց տարօրինակն այդ իրավիճակում այն էր, որ Ավինյանին ինչ-որ բաներ էին զեկուցում ԱԻՆ պաշտոնյաները, իսկ դեպքի վայրում նրա հետ միասին գնացել էին Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը, Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Ազատյանը եւ երկու վարչական շրջանների աշխատակազմերի մի քանի ներկայացուցիչներ: Ինչու էին նրանք Ավինյանի հետ այցելել «Սուրմալու»՝ առնվազն տարակուսելի է: Իսկ ամենահետաքրքիրն այն էր, որ Ավինյանի հետ այնտեղ էր նաեւ Վարագ Սիսեռյանը, որը երկար ժամանակ աշխատել է վերջինիս հետ, սակայն 2020 թվականին տեղի ունեցած 44-օրյա պատերազմից հետո՝ նոյեմբերի 16-ին, հայտարարեց ՔՊ-ից դուրս գալու մասին, ապա նաեւ քննադատում էր իշխանությունների վարած քաղաքականությունը: Այնուհետեւ տեղափոխվեց մասնավոր ոլորտ, որը, սակայն, շարունակում էր ստանալ պետության աջակցությունը, իսկ հիմա կրկին Ավինյանի կողքին է՝ փորձելով անձնական վարկանիշը բարձրացնել աղետի ֆոնին:

Արդեն երկու օր է անցել, սակայն ՀՀ քաղաքացիները չեն հետեւում Քննչական կոմիտեի հորդորին: Մասնավորապես, երեկ Քննչական կոմիտեն հայտարարություն էր տարածել՝ հորդորելով բոլոր քաղաքացիներին, որոնք «Սուրմալու» առեւտրի կենտրոնից ձեռք են բերել, սակայն դեռեւս չեն օգտագործել հրավառության համար նախատեսված նյութեր եւ պարագաներ, չօգտագործել եւ իրերը ներկայացնել ՀՀ ոստիկանության՝ իրենց բնակության վայրի բաժիններ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մինչեւ այժմ ոչ ոք չի ներկայացրել որեւէ պայթուցիկ: Սա կարող է երկու պատճառ ունենալ. կամ չեն գնել, կամ պետական քննչական կառույցին չեն վստահում: Երկու դեպքում էլ իրավիճակը հետաքրքիր է, մինչդեռ քննչականից վստահեցնում են ոչ պաշտոնական խողովակով, որ այս հորդորը նպատակ է հետապնդում հասկանալ՝ գնված հրավառ նյութը իսկական է արդյոք, կեղծված կամ ինչ վտանգավոր այլ նյութեր է պարունակում է, որը կարող էր ուժգին պայթյունի առարկա դառնալ:



Պետական եւ համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնված հիմնադրամների ղեկավարներն այսուհետ եւս պետք է ներկայացնեն գույքի եւ ունեցվածքի մասին հայտարարագիր: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նման փոփոխությամբ է հանդես եկել ՀՀ արդարադատության նախարարությունը, եւ այդ նախագիծը երեկ ընդունվել է կառավարության նիստում՝ չզեկուցվող նախագծերի թվում: Ունեցվածքի եւ շահերի հայտարարագիր պետք է ներկայացնեն նաեւ նրանց ընտանիքի անդամները: Հիմնավորման մեջ նշվում է, թե նրանք հաճախ մասնակցում են տարբեր մրցույթների, եւ կարող է լինել շահերի բախում: Նախագծերի փաթեթով առաջարկվում է նաեւ ընդլայնել փոխկապակցված անձանց շրջանակը: Առաջարկվող կարգավորման շրջանակում այն ներառում է ոչ միայն ազգակցական կապերով կապված մարդկանց, այլեւ ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց, առեւտրային իրավաբանական անձանց եւ այլն: Նշվում է, թե նախագծերը համապատասխանեցվել են միջազգային կարգավորումների հետ: Այս նախագիծը դեռ պետք է քննարկվի Ազգային ժողովի նոր նստաշրջանում:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԵՆ ԱՆՑՆԵԼՈՒ

Մի քանի օրից Արցախի Հանրապետության երեք համայնքներ՝ Բերձորը, Սուսն ու Աղավնոն, անցնելու են Ադրբեջանի վերահսկողության տակ: Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության ղեկավար Մեսրոպ Հակոբյանի հետ:

-Հայաստանը 44-օրյա պատերազմից հետո՝ օրեր անց, հերթական անգամ կփոքրանա: Այս անգամ խոսքն Արցախի Հանրապետության 3 համայնքների՝ Բերձորի, Աղավնոյի ու Սուսի մասին է: Իշխանությունը պարզաբանում է, թե հերթական զիջումը նոյեմբերյան հայտարարությունից է բխում, ընդդիմությունը, բացի իշխանությանը «հողատու», «դավաճան» բառերով անվանելը, որեւէ այլ քայլ չի անում: Ի՞նչ գնահատական կտաք տեղի ունեցող գործընթացին:

-Արդեն 4 տարի է՝ մեր ժողովուրդը ծրարի մեջ կարծես հույսեր է ստանում այս իշխանությունից: Ծրարը բացելուց հետո հասկանում է, որ այն դատարկ է: Այս նույն գործընթացը նաեւ Արցախում է: Իշխանությունները, անընդհատ գաղտնի ենթատեքստ թողնելով, ինչ-որ պահանջներ են դնում ժողովրդի առաջ, օրինակ՝ չայրեք ձեր բնակարանները: Պահանջը, որ չայրեն, վերջերս տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարը պատճառաբանեց, թե ինչու է նման արտահայտություն արել՝ ասելով, որ պետք է վերադառնանք. մարդիկ վառեցին իրենց տները Աղանուսում, բայց հիմա վերադարձել են Աղանուս:

Սրանք պոպուլիստական հայտարարություններ են, որովհետեւ մինչ իրենք ասում են, որ ճանապարհը, որով լինելու է երթեւեկությունը, լինելու է Բերձորի միջանցքի փոխարեն, միջանցքի տրամաբանությունն է ունենալու: Մեզանից որեւէ մեկը չի տեսել այդ եռակողմ հայտարարությունը, որով տրվում է միջանցքի կարգավիճակ, եւ դրանով իսկ այն տարածքները, որոնք օկուպացվել էին թշնամու կողմից, մտնելու են այդ 5կմ-ի մեջ, եւ մենք կարող ենք վերադառնալ մեր տները: Այս դեպքում եւս գնահատական կտամ, որ սա պոպուլիզմ է, եւ սա եւս այդ ծրարով տրված հույսն է ժողովրդին: Մյուս կողմից, որպես հայ, ես չեմ կարող պատկերացնել, որ հայը իր տունը վառում է, քանի որ դա սարսափելի է: Դու դրանով վառում ես քո նպատակները, քո հույսը, քո անցյալն ես վառում: Միշտ մտածել եմ, որ մենք արարող, ստեղծող ժողովուրդ ենք, ոչ երբեւէ քանդող ու ավերող մեր իսկ ստեղծածը: Իհարկե, ես չեմ կիսում այն հույսերը, որը տալիս է իշխանությունը ժողովրդին, բայց հույսս չեմ կորցնում, որ մեր ժողովուրդը կվերադարձի այն հողերը, որը այս իշխանությունը ուղղակի տվեց թշնամուն:

-Արցախի իշխանություններն Աղավնո գյուղի բնակիչներին հրահանգել են տները չհրկիզել, անվնաս հանձնել Ադրվեջանին: Սրա՞ն ինչ գնահատական կտաք:

-Երբեւէ չեմ ընդունի, որ մենք ռազմական ներուժ չենք ունեցել, չունենք կամ չենք ունենալու: 2020թ-ի պատերազմը փաստ էր այն ամենի, որ մեր 20 տարեկան առյուծասիրտ քաջորդիները չպարտվեցին, իրենք նահատակվեցին հանուն հայրենիքի, եւ իրենք հաղթեցին դրանով, իսկ պարտվեց իշխանությունը: Իշխանությունը գիտակցաբար իր գծած ծրագրով տարավ պարտության եւ շարունակում է թուլացնել, կոտրել ժողովրդին եւ բանակը: Նման իշխանությունը, բնականաբար, դիվանագիտության մեջ էլ պետք է պարտություն կրի, ինչի համար որ ինքը ստեղծվել է: Դիվանագիտական միտքը կոնկրետ ուղղություն ունի, որը ղեկավարվում է օտարերկրյա ուժերից՝ ի շահ մեր թշնամու: Մեր համար առ այսօր ընդունելի չի եւ չենք ընդունում, որ, այո, մեր ազգի մեջ կային մարդիկ, որ կգնային այդ ճանապարհով՝ հանուն իրենց շահի: Սոցցանցերում քաղաքականություն վարելը, սգալը, ողբալը, հաղթելը սկսեց այս իշխանություններից: Սոցցանցերով շարունակում են ղեկավարել ու տանել դեպի կործանում մեր հայրենիքը:

-Եթե անգամ մեր ռազմական ներուժը չի բավարարի զենքով պաշտպանել Բերձորն ու Աղավնոն, ապա ի՞նչ եղավ դիվանագիտական մտքի հետ: Մենք, փաստորեն, բացի սոցցանցերում գրառումներ անելուց, այլ բանի ընդունակ չե՞նք:

-2020թ-ի եռեկողմ հայտարարությունից հետո բոլորին թվում էր, թե դրանով ամեն ինչ ավարտվում է, եւ այդ փոքրիկ հատվածը հայրենիքի, որը մեր վերահսկողության ներքո էր, պետք է զարգանա եւ բարգավաճի: Այդ ամենը թմբիր էր, որի մեջ հայտնվել էինք, եւ համոզում էին իշխանությունները, որ այդպես է լինելու: Այս գրեթե 2 տարվա ընթացքում մենք ականատեսն ենք այս սողացող պատերազմի, որի ընթացքում շարունակվում է հանձնվել մեր հայրենիքը կտոր առ կտոր: Ես, շփվելով մեր երկրում ընդիմադիր գործընկերների հետ, տեսնում եմ, որ փորձում են ինքնակազմակերպվել եւ տանել այն ուղիով, որը հաջողություն կբերի: Արցախում արդեն իսկ սկսել ենք համախմբումը՝ «Հանուն Արցախի փրկության» շարժումը, որը ժողովրդինն է, եւ այս պահին մեր կուսակցությունը հայտարարել է, որ իր կուսակցության դրոշը այս առումով ծալում եւ միանում է ժողովրդի շարժմանը, որը պետք է տանի փրկության: Ժողովորդը ինքը պիտի ուզի դա եւ ինքը պետք է անի դա: Չեմ կարծում, որ հիմա լռություն է: Այո, լռություն է սոցցանցերում կամ լռություն է մեդյա դաշտում, բայց այդ ներքին շարժը գնալով ավելանում է, եւ ինքնապաշտպանության բնազդը բերում է նրան, որ մեզանից յուրաքանչյուրը տեր կանգնի իր հայրենիքին՝ հանուն Արցախի պաշտպանության:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՆԱԽԱԳԻԾ

ԱՆՑԱԿԵՏԻ ԱՌԱՋԱՐԿ՝ ՍԱՀՄԱՆԻՆ

Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունը շրջանառության մեջ է դրել նախագիծ, որով առաջարկվում է անցակետեր ստեղծել հայ-ադրբեջանական սահմանի որոշ հատվածներում:

ՀՀ կառավարության 2011 թվականի N 703-Ն որոշման լրացումներ կատարելու մասին նախագիծը հրապարակվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ e-draft.am-ում: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծի ընդունումը պայմանավորված է օգոստոսի 4-ին կառավարության նիստի ընթացքում վարչապետի կողմից տրված հանձնարարականների կատարման ապահովման անհրաժեշտությամբ: Ակնկալվող արդյունքը Հայաստանում պետական սահմանի նոր անցման կետերի ստեղծումն է՝ պետական սահմանով անձանց, ապրանքների եւ տրանսպորտային միջոցների անցումը կազմակերպելու եւ իրականացնելու նպատակով: Նոր անցակետերը նախատեսվում են ստեղծել Գեղարքունիքի (Սոթք համայնքից դեպի ՀՀ պետական սահման M11 մայրուղի՝ ավտոմոբիլային), Արարատի (Երասխ համայնք՝ ավտոմոբիլային), Սյունիքի (Քարահունջ համայնքից մոտ 7,5 կմ հարավ, հարավ-արեւելք M2 մայրուղի՝ ավտոմոբիլային) մարզերում հայ-ադրբեջանական սահմանի ուղղությամբ:

Նախագիծը մշակվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից: Նախագծի ընդունմամբ անհրաժեշտություն կառաջանա ներգրավվել լրացուցիչ ֆինանսական միջոցներ նոր անցման կետերի շինարարական եւ կահավորման աշխատանքների իրականացման համար:

ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐ

Առաջիկայում մաքսային հսկողության գոտիներ կսահմանվեն: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այս մասին որոշման նախագիծն արդեն դրել է հանրային քննարկման: Թեեւ նախագիծը նոր է հայտնվել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում, բայց հասցրել է հավաքել 4 «Դեմ» ձայն:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Արարատյան մաքսատուն-վարչության Սոթքի մաքսային կետ-բաժնի, Երասխի մաքսային կետ-բաժնի, Հարավային մաքսատուն-վարչության Քարահունջի մաքսային կետ-բաժնի տարածքներում կսահմանվի մաքսային հսկողության գոտի: Անցման կետերը կգործեն համապատասխան շինարարական եւ կահավորման աշխատանքներն ավարտելուն հաջորդող օրվանից:

«ՄԻՋԱՆՑՔԻ» ՀԱՐՑ

Թուրքիայում ակտիվացել են «Զանգեզուրի միջանցքի» մասին խոսակցությունները: Հատկանշական է, որ թուրք պաշտոնյաները խոսում են «միջանցքի» մասին՝ նույնիսկ չհիշատակելով Հայաստանը: Հիշեցնենք, որ խոսքը Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից Հայաստանի տարածքի մի մասը՝ Սյունիքը (Զանգեզուր) բռնակցելու փորձի մասին է: Ինչպես ԱՊԱ-ին հայտարարել է Թուրքիայի Հանրապետության առեւտրի փոխնախարար, մաքսային բաժնի ղեկավար Ռեզա Թունա Թուրագայը, նախատեսվում է ընդլայնել Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ «Արտոնյալ առեւտրային համաձայնագրի» շրջանակը: Ռ.Թ. Թուրագայը նշել է, որ նպատակ է դրվել երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը 15 միլիարդ դոլարի հասցնել. «Այս պահին մեր ապրանքաշրջանառությունը մոտ 5 միլիարդ դոլար է կազմում: 2021 թ. մեր ներմուծումը կազմել է 2.3 մլրդ դոլար, իսկ արտահանումը՝ 2.7 մլրդ դոլար: Մենք աշխատում ենք ապրանքաշրջանառության այս ծավալն ավելացնելու ուղղությամբ»:

Նրա խոսքով՝ առեւտրային հարաբերությունների ընդլայնման համար կարեւորագույն հարցերից մեկը «Զանգեզուրի միջանցքի բացումն է»: «Այդ միջանցքի բացումը մեզ առավելություն կտա՝ Ադրբեջան, իսկ այնտեղից Կենտրոնական Ասիայի երկրներ մուտք գործելու տեսանկյունից՝ առեւտրի ծավալներն ավելացնելու համար: «Զանգեզուրի միջանցքի» բացման շուրջ Ռուսաստանի հետ բարձր մակարդակով բանակցությունները շարունակվում են: Մենք ակնկալում ենք, որ միջանցքը կբացվի ամենամոտ ապագայում»,- ասել է թուրք փոխնախարարը՝ այդպիսով ակնարկելով Ռուսաստանի հետ ինչ-որ գաղտնի բանակցությունների մասին:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԽԱՆԴԻ ՀՈՂԻ ՎՐԱ

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Նոր Գեղի գյուղում ամուսնու կողմից կնոջը սպանելու եւ հետո ինքնասպան լինելու դեպքը խանդի հետեւանք է: Մահացած ամուսիների մտերիմները իրավապահներին ուշագրավ մանրամասներ են պատմել: Ինչպես հայտնի է, օգոստոսի 18-ին դաժան ու ողբերգական դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 07:40-ի սահմաններում ոստիկանության Նաիրիի բաժին ահազանգ է ստացվել, որ Նոր Գեղի գյուղի տներից մեկում կնոջ դի կա: Ոստիկաններն ու քննիչները նշված տանը հայտնաբերել են տանտիրուհու 71-ամյա Սվետլանա Ավագյանի դին: Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ մարմնի վրա կա սուր կտրող-ծակող առարկայի հարվածի մի քանի հետք: Մինչ դեպքի վայրում աշխատում էին քննիչները, ոստիկանության Նաիրիի բաժին ահազանգ է ստացվել, որ Նոր Հաճնի կամրջի տակ տղամարդու դի կա: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ տղամարդը սպանել է կնոջը, ապա ինքը իրեն կամրջից ցած նետել: Իսկ ինչո՞ւ պետք է 71 տարեկան տղամարդը սպաներ իր կնոջը եւ հետո վերջ տար իր կյանքին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ տղամարդը շատ է խանդել կնոջը, եւ վերջին շրջանում խանդի դրսեւորումները ավելի են շատացել, ինչը տարբեր վեճերի պատճառ է եղել:

ԿԱԽՎԵԼ Է ՏԱՆԻՔՈՒՄ

Նոր Նորք վարչական շրջանի Ծարավ Աղբյուր փողոցում ապրող 22 տարեկան աղջիկը, որը սովորում էր Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, օգոստոսի 17-ին՝ ժ.21.00-ին, ինքնասպանություն է գործել՝ իր տան տանիքում պարանով կախվելով:

ArmLur.am-ին բնակիչները պատմեցին, որ 22 տարեկան աղջիկը սոցիալապես ապահով ընտանիքից էր, նրան բնութագրում էին որպես լավ մարդ, ուներ ընկեր: Սովորում էր ԵՊԲՀ 4-րդ կուրսում:

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ուշագրավ դեպք է տեղի ունեցել Արմավիրի մարզի Գեղակերտ գյուղում: 64 տարեկան բնակչուհին իր տանն այրել է հագին եղած հագուստն ու «ջերմային այրվածք 1-ին եւ 2-րդ աստիճանի» ախտորոշմամբ տեղափոխվել հիվանդանոց:

ՆՎԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀՀ արդարադատության նախարարությունն առաջարկում է փոփոխություն կատարել ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է օրենքի 31-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

- վերախմբագրել «կրթական աշխատանք» եզրույթը,
- արգելել հանրային պաշտոն զբաղեցնող անձին հանրային ծառայողին փոխկապակցված անձի հետ կնքել առեւտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիր,
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հավատարմագրային կառավարման գործունեությունը առաջարկվում է դարձնել ծանուցվող գործունեություն,
- առաջարկվում է նաեւ ուժը կորցրած ճանաչել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետը, որը առեւտրային կազմակերպության մասնաբաժնի կառավարումը դուրս էր թողնում այդ օրենքի 3-րդ բաժնի կարգավորումներից: Արդյունքում այդպիսի ծառայությունը կարող էր իրականացվել չլիցենզավորված կազմակերպության կողմից: Նախագծի ընդունման պարագայում այդպիսի իրավիճակը կբացառվի,
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի կառավարման գրանցումը դարձնել պարտադիր,
- արդյունքում, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի եւ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի կառավարումը կդառնա վերահսկելի եւ կբացառվի պաշտոնյայի հետ փոխկապակցված անձանց որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալը:

Բացի այդ, առաջարկվում է սահմանել հստակ ժամկետ, որի ընթացքում պաշտոնյան պարտավոր կլինի պաշտոնավարման ընթացքում ձեռք բերված մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման:

Նախագծով առաջարկվող ձեւակերպմամբ փորձ է արվել սահմանելու նոր կարգավորում, համաձայն որի՝ որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձինք: Նախագծով ընդլայնվել է առեւտրային կազմակերպություններում հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողների՝ իրենց մասնակցությունը հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքերը՝ մասնավորապես ներառելով այն դեպքը, երբ համապատասխան մասնակցությունը ձեռք է բերվում պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում. այդպիսի մասնակցություն ձեռք բերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, բաժնեմասը, բաժնետոմսը, փայը օրենքով սահմանված կարգով պետք է հանձնվի հավատարմագրային կառավարման:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջացել վերանայելու շահերի բախման՝ ՀՀ օրենսդրությամբ առկա հասկացությունը՝ հստակեցնելով շահերի բախման տարատեսակներից պոտենցիալ շահերի բախման սահմանումը՝ սահմանելով, որ շահերի բախման իրավիճակ է նաեւ, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերը կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ եւ օբյեկտիվ կատարման վրա: Ընդ որում, ի տարբերություն օրենքի ներկայիս կարգավորումների, որտեղ, ըստ էության, բացահայտված չէ «մասնավոր շահ» եզրույթի բովանդակությունը, վերոգրյալ փաստաթղթերը նկարագրում են նաեւ այդ հասկացությունը:

Հանրային ծառայության ոլորտում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց շրջանակը սահմանված է օրենքի 34-րդ հոդվածով, սակայն դրանց մեջ չեն ներառված պետական եւ համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրած հիմնադրամների, 50 եւ ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության եւ համայնքի մասնակցությամբ առեւտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները:

Հաշվի առնելով նշված կազմակերպությունների գործունեության բնույթը, դրանից բխող ռիսկերը (օրինակ՝ նշված կազմակերպությունները հանդիսանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով պատվիրատու)՝ անհրաժեշտություն է առաջացել նախագծով վերոնշյալ կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների եւ նրանց ընտանիքի անդամների համար նույնպես նախատեսելու գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն:

Ներկայացված նախագծերի փաթեթով առաջարկվում է ԳՐԵԿՈ-ի կողմից ներկայացված հանձնարարականների, ինչպես նաեւ միջազգային փորձագետների կողմից իրականացված ուսումնասիրությունների հիման վրա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների կողմից նվերներ ստանալու սահմանափակումներ նախատեսող կարգավորումները համախմբել մեկ իրավական ակտում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում՝ իրականացնելով համապատասխան փոփոխություններ «Հանրային ծառայության մասին», «Կոռուպցիայի կանխարգելման մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Դատախազության մասին» եւ մի շարք այլ հարակից օրենքներում: Այդպիսով կապահովվի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կարգավորումների միասնականությունը, եւ կբացառվի տարբեր օրենքներում տարաբնույթ կարգավորումների առկայությունը:

Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է նվերներ ընդունելու սահմանափակումների խախտման դեպքում կարգապահական պատասխանատվության փոխարեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների համար սահմանել վարչական պատասխանատվություն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-ն շարունակում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկարաժամկետ խաղաղություն հաստատելու ուղղությամբ աշխատանքը: Այս մասին ճեպազրույցում հայտարարել է ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչ Նեդ Փրայսը:

«Մենք շարունակում ենք անել հնարավոր ամեն ինչ՝ նպաստելու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ համապարփակ երկարաժամկետ խաղաղությանը: Պետքարտուղար Բլինքենը վերջերս հնարավորություն ունեցավ զրուցելու երկու երկրների ղեկավարների հետ: Մենք մեր խորը մտահոգությունն ենք հայտնել Լեռնային Ղարաբաղում եւ դրա շուրջ վերջին մարտերի, մարդկային կորուստների կապակցությամբ: Մենք կոչ ենք արել անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու լարվածությունը եւ կանխելու կողմերի միջեւ հետագա էսկալացիան: Մենք կարծում ենք, որ վերջին շրջանում լարվածության աճն ընդգծում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված բոլոր չլուծված խնդիրների բանակցային, համապարփակ եւ կայուն լուծման անհրաժեշտությունը: Մենք շարունակում ենք հավատարիմ մնալ կողմերի հետ աշխատելուն եւ կշարունակենք դա անել երկկողմ հիմունքներով: Մենք հավատում ենք, որ մշտական երկխոսության եւ փոխգործակցության միջոցով, այդ թվում՝ ամենաբարձր մակարդակով, մենք կկարողանանք անել հնարավոր ամեն ինչ՝ նպաստելու երկարաժամկետ համապարփակ խաղաղության առաջխաղացմանը»,-ասել է Փրայսը:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1019 ԴԵՊՔ

Ոստիկանության քրեական հետախուզության վարչության կողմից առաջին կիսամյակում կատարված աշխատանքները վարչության պետ, գնդապետ Արայիկ Գասպարյանն ամփոփում է զոհացուցիչ արդյունքներով:

Հանցագործությունների կազմում 182 դեպքով աճել է բացահայտման տոկոսում հաշվվող հանցագործությունները՝ 1019 դեպք՝նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 837-ի համեմատ:

Հանցագործությունների կանխարգելման, բացահայտման, հետախուզվող հանցագործների եւ անհայտ կորած անձանց որոնման ուղղություններով աշխատանքները համակարգելու, դրանց ձեւերն ու մեթոդները կատարելագործելու, ինչպես նաեւ գործնական ու մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով ոստիկանության քրեական հետախուզության վարչության կողմից առաջին կիսամյակում տարվել են մի շարք աշխատանքներ:

Հանցագործություն կատարած եւ անհայտ կորած անձանց հետախուզման ուղղությամբ ակտիվ համագործակցություն է իրականացվել ոստիկանության տարածքային, ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության եւ Երեւան քաղաքի վարչության ստորաբաժանումների հետ, որի արդյունքում հայտնաբերվել եւ նախաքննության մարմին ու դատարան են ներկայացվել հանցագործություն կատարած 19 անձ:

Քննարկվել է առերեւույթ հանցագործության մասին ֆիզիկական անձանց եւ հետաքննության մարմնի կողմից հանցագործության վերաբերյալ տվյալներ հայտնաբերելու մասին 102 հաղորդում, դրանցից 45-ով հարուցվել է քրեական գործ, 46-ով մերժվել է քրեական գործի հարուցումը, այդ թվում 15-ը ոչ արդարացման հիմքերով, 3-ը կցվել է առաջին հաղորդմանը, իսկ 8-ը գտնվում է ստուգման փուլում: Հարկ է նշել, որ նշված հաղորդումներից 78-ով առերեւույթ հանցագործության դեպքերը հայտնաբերվել են ՔՀ վարչության ծառայողների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում: Բացի դրանից, վարչության ծառայողների կողմից քննարկվել է քաղաքացիներից ստացված 117 դիմում-բողոք, որոնց արդյունքների մասին սահմանված կարգով ծանուցվել են դիմումատուները:

Ծանր հանցագործությունները նվազել են 20 դեպքով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ աճել 3-ով: Նշված հանցագործությունների հայտնաբերման եւ բացահայտման ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարվել ՔՀ վարչության ծառայողների կողմից, որի արդյունքում հայտնաբերվել է ծանր եւ առանձնապես ծանր հանցագործության 12 դեպք: Հանցավորության դեմ պայքարի կարեւորագույն ցուցանիշներից է հանցագործությունների բացահայտման բարձր արդյունավետության ապահովումը: Հաշվետու ժամանակահատվածում 37,9% աճ է արձանագրվել վարույթում գտնվող քրեական գործերով բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 86,2%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 48,3%-ի համեմատ:

Քողարկված եւ ոչ ակնհայտ պայմաններում կատարված հանցագործությունների հայտնաբերման եւ բացահայտման հիմնական ծանրությունն ընկած է օպերատիվ ծառայողների վրա, որոնց կողմից հայտնաբերվել է ընդհանուր հանցագործության 295 դեպք, ինչպես նաեւ պարզվել է հանցագործություն կատարած 265 անձի ինքնությունը: Վարչության ծառայողների կողմից անմիջապես հայտնաբերվել է 70, իսկ տարածքային ստորաբաժանումների ծառայողների հետ համատեղ՝ 39 հանցագործության դեպք:

Արայիկ Գասպարյանն ընդգծում է, որ վարչության ծառայողները շուրջօրյա ռեժիմով շարունակում են ծառայություն իրականացնել Արցախի Հանրապետության ողջ տարածքում՝ վերահսկելով օպերատիվ իրավիճակը:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է 2 ՆՌՆԱԿ

Երեկ օգոստոսի 18-ին՝ ժամը 08:38-ին, ԱԻ պետական ծառայության 911 ահազանգման կենտրոնում հաղորդում է ստացվել Ստեփանակերտ քաղաքի գերեզմանոցի հարակից տարածքում բռնկված հրդեհի մասին: Նախնական տվյալներով՝ այրվում է չոր խոտատարածք, եւ պայթում է զինամթերք:

Ժամը 08:40-ին ԱԻՊԾ ՓՈՒՎ սակրավորական խումբը մեկնել է նշված վայր հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով: Ժամը 09:01-ին հրշեջ մեքենան մարտական հաշվարկով նույնպես մեկնել է դեպքի վայր եւ մեկուսացրել հրդեհը ժամը 09:09-ին, մարվել՝ ժամը 09:40-ին:

Հրդեհի հետեւանքով այրվել են չոր խոտեր եւ թփեր մոտ 10 x 60 մ:

Հետախուզական աշխատանքների արդյունքում նշված տարածքում հայտնաբերվել է նռնականետի 2 նռնակ, որոնք սակրավորները տեղափոխել են անվտանգ տարածք եւ ոչնչացրել:

ՎՆԱՍԵԼ ԵՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԵՐԸ

Ոստիկանության Նաիրիի բաժնում նյութեր են նախապատրաստվել օգոստոսի 14-ին ոստիկանության Նաիրիի բաժին դիմած Երեւանի բնակիչ 41-ամյա Լ. Մ.-ի հաղորդման փաստով:

Վերջինս հայտնել է, որ այցելել է Կոտայքի մարզի Մրգաշեն գյուղում գտնվող իրենց ընտանեկան գերեզմանատուն, որտեղ հայտնաբերել է, որ օգոստոսի 7-ից օգոստոսի 14-ն ընկած ժամանակահատվածում կոտրել եւ վնասել են իր հոր եւ եղբոր գերեզմանաքարերը, ինչպես նաեւ գերեզմանատան վրայի մետաղյա ծածկը: Ժամանած ոստիկաններին Լ. Մ-ն հայտնել է, որ իրեն պատճառվել է մոտ 1 մլն դրամի վնաս:

Մրգաշեն գյուղի մի քանի բնակիչներ, ասում են, որ դեպքի մասին առավոտ շուտ են իմացել: «Մենք էլ ենք մտածում, որ հնարավոր է՝ վանդալիզմ է իրականացվել, բայց հակված ենք այն մտքին, որ շիրմաքարերը տապալվել են ուժեղ քամու պատճառով, ինչպես նաեւ քամու հետեւանքով է մետաղյա ծածկը պոկվել: Մեր գյուղում մի քանի անգամ ուժեղ քամու հետեւանքով գերեզմաններ են վնասվել:

Թող ոստիկաններն ու քննիչները պարզեն եղելությունը, թե արդյոք որն է իրականությունը՝ վանդալիզմը, թե քամին ու պատճառված վնասը»:

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննչական կոմիտեն հայտնում է, որ Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում Քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացվում են քննչական եւ վարութային գործողություններ՝ Երեւանի 27-ամյա բնակչի նկատմամբ սպանության փորձ կատարելու դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

«Հիշյալ դեպքի առթիվ ահազանգը ստացվել է 2022 թվականի օգոստոսի 18-ին՝ժամը 01:40-ին, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնից, որով տեղեկացվել է, որ «ձախ ստորանրակային շրջանի ծակած-կտրած վերք» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել վերոնշյալ երիտասարդը: Համաձայն բժշկական կենտրոնից ստացված տեղեկանքի՝ 27-ամյա երիտասարդի մոտ ախտորոշվել է «պարանոցի ձախ կեսի կտրած-ծակած վիրավորում շնչափողի վնասումով, երկկողմանի պնեւմոթորաքս, ենթամաշկային էմֆիզեմա», վիճակը գնահատվում է ծայրահեղ ծանր:

Նախաքննության ընթացքում կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել եւ վերցվել են արնանման հետքեր, առգրավվել է տուժողի հագուստը, զննության է ենթարկվել բժշկական կենտրոնի կրիմինալ դեպքերի մատյանը, նշանակվել դատաբժշկական փորձաքննություն: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքները, ինչպես նաեւ ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի (անձանց) ինքնությունը պարզելու, հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Օգոստոսի 16-ին՝ ժամը 01.20-ին, «Աշտարակ» բժշկական կենտրոնից ոստիկանություն հաղորդում էր ստացվել, որ կտրած-ծակած, պատռված վերքերով, մկանի եւ նյարդերի վնասումով բուժօգնության է դիմել Կոշ համայնքի բնակիչ, 44-ամյա տղամարդ: Ժամը 02.20-ին նույն հիվանդանոցից դարձյալ հաղորդումներ են ստացվել. այս անգամ մարմնական վնասվածքներով բուժօգնության էին տեղափոխվել Կոշ համայնքի 24-ամյա եւ Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղի 35-ամյա երկու երիտասարդ: Ժամը 03.20-ին մեկ այլ բժշկական կենտրոնից էր ահազանգ ստացվել. կտրած-ծակած, պատռված վերքերով բուժօգնության էր տեղափոխվել Կոշ համայնքի բնակիչ 27-ամյա երիտասարդ: Ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ օգոստոսի 15-ին՝ ժամը 23.30-ի սահմաններում, Արագածոտնի մարզի Կոշ համայնքի վարչական տարածքի հանդիսության սրահներից մեկում նույն համայնքի 29 եւ 44 տարեկան երկու բնակչի միջեւ տեղի ունեցած վիճաբանություն-ծեծկռտուքն այնուհետեւ տեղափոխվել էր այլ տարածք, որտեղ նրանց էին միացել երեք երիտասարդները: Վիճաբանության ընթացքում 29-ամյա երիտասարդը դանակահարել էր հիվանդանոց տեղափոխված չորս անձանց: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

7 ՈՒՍՈՒՑՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼ ԵՆ

Լուսինե Հովհաննիսյանը շուրջ մեկ տարի զբաղեցնում է Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնը: Նա հուլիսի 1-ին աշխատանքից ազատել է դպրոցի բազմավաստակ 7 մանկավարժների՝ պատճառաբանելով, որ նրանք կենսաթոշակային տարիքի են, մինչդեռ կենսաթոշակային տարիքի ուսուցիչներին աշխատանքից ազատելու օրենք, իմպերատիվ պահանջ չկա: Դպրոցի տնօրենը աշխատանքից ազատված ուսուցիչներին հորդորել է աշխատանքից ազատման դիմումներ գրել, սակայն 7-ից միայն 2-ն են դիմում գրել, եւ դրա հետեւանքով նրանցից մեկի առողջական վիճակը վատացել է: Աշխատանքից ազատված աշխատակիցներն ասում են, որ տնօրենը կենսաթոշակային տարիքի ուսուցիչներին աշխատանքի ազատելիս գործել է առանց սկզբունքի, խտրական ձեւով, թիվ 2 հիմնական դպրոցում աշխատանքից չեն ազատվել կենսաթոշակային տարիքի այլ ուսուցիչներ, որոնք նոր ուսումնական տարում կդասավանդեն: Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոցից հայտնեցին, որ այդ դպրոցում անցած ուսումնական տարում անօրինական կերպով գործել է բուֆետ, որպես բուֆետապան աշխատել է դպրոցի պահակը, վերադասից աշխատող ժամանելու դեպքում բուֆետը հապշտապ փակել են: Դպրոցի կենսաթոշակառու ուսուցիչներից մեկին աշխատանքից ազատելիս դպրոցի տնօրենը նրան ասել է, որ նրա մասնագիտական կարողությունները թույլ են, բողոքներ կան նրա աշխատանքի որակի վերաբերյալ: Անահիտ Ամիրաղյանը 1993թ.-ից, 29 տարի աշխատել է որպես Նոյեմբերյանի թիվ 2 դպրոցի ուսմասվար, Լ. Հովհաննիսյանը նրան հուլիսի 1-ին ազատել է այդ հաստիքից: Ա. Ամիրաղյանը հայտնեց, որ ուսմասվարի հաստիքից ազատելը դպրոցի տնօրենի հայեցողությունն է, սակայն նա իրեն պաշտոնից ազատել է պայմանագրի ժամկետը լրանալուց առաջ՝ հուլիսի 1-ին: Տեխնոլոգիայի, գծագրության եւ նկարչության ուսուցչուհի Արեւ Բեջանյանին տնօրենն աշխատանքից ազատել է պայմանագրի ժամկետը լրանալուց ավելի վաղ՝ հունիսի 30-ի հրամանով, սակայն այդ մասին Ա. Բեջանյանին օրենքով սահմանված կարգով չի ծանուցել: Վերջինս այդ մասին պատահական կերպով է իմացել, երբ ուսուցիչների մեթոդական միավորման ֆեյսբուքյան խմբից հեռացված է տեսել իր անունը: Ա. Բեջայանը կարծում է, որ դպրոցի տնօրենն աշխատանքից ազատելու մասին սահմանված կարգով իրեն չի հայտնել, որպեսզի սպառվի տնօրենի հրամանը բողոքարկելու համար օրենքով սահմանված ժամկետը: Ա. Բեջանյանը փաստաբան ունի, դատական կարգով վիճարկելու է իրեն աշխատանքից ազատելու մասին դպրոցի տնօրենի հրամանի օրինաչափությունը

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏԵՎԱՆՔ

ԱԶԱՏ ՎԱՃԱՌՔԸ ՊԵՏՔ Է ԱՐԳԵԼՎԻ

ՀՀ կառավարության նիստում ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհված քաղաքացիների հիշատակը:

«Ի հիշատակ 2020 թվականի օգոստոսի 14-ին «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի տարածքում տեղի ունեցած հրդեհի եւ պայթյունի հետեւանքով զոհված քաղաքացիների՝ իմ որոշմամբ՝ 2022 թվականի 17-ից 18-ը սուգ է հայտարարված Հայաստանի Հանրապետությունում: Խնդրում եմ հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգել զոհերի հիշատակը»,- այս մասին ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Օգոստոսի 14-ին՝ ժամը 13:23-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի է ունեցել պայթյուն: Վերջին տվյալներով՝ մահացել է 16 մարդ, տուժել է 60-ից ավելի քաղաքացի, կան 2 անհետ կորածներ:

«Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 357-րդ հոդվածի 2-րդ մասի (Հրդեհային անվտանգության կանոնները կամ պահանջները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք) եւ 358-րդ հոդվածի 2-րդ մասի (Դյուրավառ կամ այրիչ նյութերի պահպանման, հաշվառման, փոխադրման, առաքման կամ օգտագործման կանոնները կամ պահանջները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք) հատկանիշներով ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

«Տեսագրություններից ակնհայտ է դառնում, որ ահաբեկչական որեւէ գործողության տրամաբանությունը բացառվում է, որովհետեւ տեսնում ենք, որ ծուխ կա, փախչող մարդիկ կան, որից հետո տեղի է ունեցել պայթյուն»,- կառավարության նիստի ժամանակ անդրադառնալով օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի հնարավոր պատճառներին՝ ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Բացի այդ, վիզուալ տեղեկատվությունը, որ մենք ունենք, գրեթե բացառում է ահաբեկչության հանգամանքը: Նման դեպքից հետո առաջին հարցը, որ ինձ մոտ ծագում է, այն է, թե ինչ չենք արել, որպեսզի կարողանայինք բացառել նման զարգացումը: Դեռեւս 2020 թ.-ի օգոստոսին Բեյրութում տեղի ունեցած պայթյունից հետո ես հանձնարարական եմ տվել համապատասխան գերատեսչություններին հավաքել տեղեկատվություն բոլոր այն օբյեկտների, ընկերությունների վերաբերյալ, որոնք գործ ունեն պայթյունավտանգ իրերի հետ: Դեպքից հետո հաշվետություն եմ ստացել հանձնարարականի վերաբերյալ: Այս պահի դրությամբ գիտենք, որ առեւտրի կենտրոնում հրդեհային եւ տեխնիկական տեսչական մարմինը կատարել է ստուգումներ, ենթադրում եմ, որ այդ հանձնարարականի շրջանակներում եւ արձանագրել խախտումներ»,- ասաց Փաշինյանը: Վերջինս հանձնարարական տվեց ՊՎԾ պետին՝ ուսումնասիրություն իրականացնել եւ զեկուցել, թե ինչպես է կատարվել իր տված հանձնարարականը: Քննչական կոմիտեի ղեկավար Արգիշտի Քյարամյանը եւս անդրադարձավ պայթյունի հնարավոր պատճառներին՝ նշելով, որ քրեական գործում առկա ապացույցները վկայում են, որ գործ ունենք անզգուշությամբ տեղի ունեցած հանցագործության հետ:

2020 թվականի օգոստոսին Բեյրութում տեղի ունեցած պայթյունից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանը համապատասխան գերատեսչություններին հանձնարարել է հավաքել տեղեկատվություն բոլոր հնարավոր այն օբյեկտների մասին, որոնք ունեն պայթյունավտանգ նյութեր: Կառավարության նիստի ժամանակ վարչապետն ասաց, որ ինքը փորձել է հաշվետվություն ստանալ տրված հանձնարարականի կատարման վերաբերյալ:

«Տեղեկատվությունը ամփոփվում է: Նաեւ պետք է հանձնարարեմ՝ Պետական վերահսկողական ծառայությունը կոնկրետ իրականացնի ուսումնասիրություն եւ զեկուցի, թե իմ հանձնարարականը ինչպես է կատարվել»,- ասաց վարչապետը:

Վարչապետի խոսքով՝ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում համապատասխան տեսչական մարմինը 2021 թվականի գարնանը կատարել է ստուգումներ եւ արձանագրել խախտումներ:

«Այս տեղեկությունը հայտնի է, բայց, ամեն դեպքում, ինձ անհրաժեշտ է խորքային ուսումնասիրություն, թե բովանդակային առումով ինչպես է կատարվել հանձնարարականը: Այդ հանձնարարականը ժամկետով սահմանափակված չի եղել: Բեյրույթի պայթյունից հետո խնդիր է դրվել միջոցներ ձեռնարկել, որպեսզի Հայաստանում նմանատիպ իրադարձություն տեղի չունենա»,- ասաց վարչապետը:

Վարչապետը շեշտեց, որ հրավտանգ նյութերի ներմուծումը, արտադրությունը եւ օգտագործումը պետք է իրականացվի միայն լիցենզավորված կազմակերպությունների կողմից. «Այսինքն՝ ազատ վաճառքը պետք է արգելվի: Մենք չենք ասում՝ երկրում հրավառություն պիտի չլինի, այդ թվում՝ մասնավոր առիթներով»:

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԿՍԱՀՄԱՆՎԵՆ

Զոհված երկու զինծառայողի դեպքում պարգեւավճարի չափը կսահմանվի կրկնակի: Բացի այս, ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունն առաջարկում է պարգեւավճարի իրավունք նախատեսել նաեւ աշխատանքային կենսաթոշակ, ծերության, հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք ունեցող ՀՀ պաշտպանության մասնակիցների համար:

Մեզ հայտնի դարձավ, որ սոցիալական երաշխիքների առանձնահատկություն կսահմանվի այն ընտանիքների համար, որտեղ կան զոհված երկու զինծառայող՝ երկու ծնող, երկու զավակ, ամուսին եւ զավակ, ծնող եւ զավակ, ծնող եւ ամուսին:

Պարգեւավճարի իրավունք կունենան զոհված զինծառայողների ընտանիքները ՀՀ պաշտպանության ժամանակ, ինչպես նաեւ ծառայողական կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված, հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած անձի ընտանիքին կհատկացվի 250 հազար դրամ: ՀՀ պաշտպանության ժամանակ, ինչպես նաեւ ծառայողական կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված, հետմահու առաջին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով պարգեւատրված անձի ընտանիքը կստանա 150 հազար դրամ:

ArmLur.am-ը տեղեկացավ նաեւ, որ պաշտպանության ժամանակ, ինչպես նաեւ ծառայողական կամ պաշտոնեական պարտականությունները կատարելիս զոհված, հետմահու երկրորդ աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով պարգեւատրված անձի ընտանիքը կստանա 100 հազար դրամ:

Ի դեպ, ըստ Պաշտպանության նախարարության՝ 15 ընտանիքում զոհված երկու զինծառայողի համար պարգեւավճարների չափերն ավելացնելու դեպքում հարկ կլինի լրացուցիչ հատկացնել ամսական 465 հազար դրամ կամ տարեկան 5 մլն 580 հազար դրամ, ինչը կֆինանսավորվի սոցիալական ապահովության ոլորտին հատկացված միջոցների հաշվին:

Ս. Հ.

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 18-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

Մասնաճյուղային ցանցի արդիականացման, ինչպես նաեւ հաճախորդներին նորարարական լուծումներ առաջարկելու նպատակով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) վերանորոգման եւ տեխնիկական բարելավման աշխատանքներ կիրականացնի Երիտասարդական մասնաճյուղում (հասցե՝ ք.Երեւան, Աբովյան 36 թիվ 49):

Այս հանգամանքով պայմանավորված՝ 2022թ. օգոստոսի 22-ից սկսած՝ Երիտասարդական մասնաճյուղը ժամանակավորապես դադարեցնելու է իր գործունեությունը (մոտ մեկ ամիս): Մասնաճյուղի վերաբացման մասին լրացուցիչ կտեղեկացնենք:

Բանկի ցանկացած այլ մասնաճյուղ լիարժեք սպասարկելու է իր հաճախորդներին:

Երիտասարդական մասնաճյուղին առավել մոտ գործող մասնաճյուղերն են՝

- «Սայաթ-Նովա» (Սայաթ-Նովա 8 շենք, 21/1 տարածք եւ Աբովյան 22 շենք, թիվ 1/1 տարածք),
- «Օպերա» (ք. Երեւան, Մաշտոցի պողոտա 42 շենք, 17/1),
- «Տերյան» (Սայաթ-Նովա 7 շենք, 12 տարածք):

Տեղեկացնենք նաեւ, որ Բանկի հաճախորդները կարող են գործարքներն իրականացնել «ACBA DIGITAL» հավելվածի միջոցով:

Սույն ծանուցման հետ կապված հարցերի դեպքում կարող եք զանգահարել (010) 31-88-88 հեռախոսահամարով:

Շնորհակալություն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ծառայություններից օգտվելու համար:

Հարգանքով՝
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ ԿԱՆԵՆ

Տաթեւ-Աղվանի ճանապարհի երրորդ շերտ ասֆալտապատումը իրականացնելու համար ՀՀ կառավարությունը 1 մլրդ 45 մլն դրամ կհատկացնի: Նման որոշում կայացվեց կառավարության այսօրվա նիստի ժամանակ: Կառավարության նիստի ժամանակ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը նշեց, որ Տաթեւ-Աղվանի ճանապարհի շինարարությունը սկսվել էր դեռ 2020 թվականի պատերազմից առաջ, եւ նախատեսված չէր, որ այն նման ծանրաբեռնվածությամբ կաշխատի: «Տարբեր խնդիրներ ի հայտ եկան շինարարության ընթացքում առաջացած խնդիրների կամ թերությունների պատճառով: Հիմա թերությունները շտկված են, եւ պայմանագրում փոփոխություն ենք իրականացնում նույն շինարարական ընկերության հետ, որպեսզի եւս մեկ շերտ այնտեղ ասֆալտապատվի»,- նշեց Սանոսյանը: Տաթեւ-Աղվանի Մ-2 12 կմ ճանապարհի ասֆալտապատման 2 շերտ արել է «Բիլդեր Քոնսթրաքշն» ընկերությունը, եւ հիմա նույն ընկերության հետ պայմանագիր կկնքվի, որպեսզի երրորդ շերտն արվի: Նիկոլ Փաշինյանը նշեց, որ այս տարի գարնանը ճանապարհին արդեն փոսեր էին առաջացել, սակայն պատճառը գիտեն. ճանապարհը միջհամայնքային էր, սակայն այն կիրառվել է նաեւ որպես այլընտրանք Գորիս-Կապան ճանապարհի հատվածի, որն անցել է Ադրբեջանի վերահսկողության ներքո:

ԲԱՆԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆՆ Է

Կենտրոնական բանկն ավելացնում է կուտակային միջոցների ռիսկայնությունը: Այս մասին գրում է ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի պատասխանատու, տնտեսագետ Սուրեն Պարսյանը:

«16.08.2022 թվականին ՀՀ կառավարությունը իրավական նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրել է ««Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, ըստ որի՝նախատեսվում է կատարել մի շարք փոփոխություններ: Սա հերթական արկածախնդրությունն է պարտադիր կուտակայինի հեղինակների կողմից: Ժողովրդական լեզվով ասված՝ ցանկանում են «ղումար» խաղալ շարքային քաղաքացիների փողերով: Սա սխալ եւ ժամանակավրեպ նախագիծ է, եւ օր առաջ պետք է կասեցնել:

ՀՀ կառավարությունն ու կենտրոնական բանկը, ի հաշիվ շարքային քաղաքացիների կուտակած միջոցների, շարունակում են աջակցել մասնավոր ֆոնդերի կառավարիչներին եւ խիստ ռիսկային ու կասկածելի կազմակերպություններին, մասնավորապես՝

1. իշխանությունները ցանկանում են ֆոնդի կառավարիչներին ազատել թղթային ծանուցումներ կատարելու պարտավորությունից, քանի որ դա ավելացնում է գործառնական ծախսերը, որը պահվում է շարքային քաղաքացիների կուտակած միջոցներից: 2014 թվականից պարտադրված հանդիսանալով պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից՝հստակ կարող եմ նշել, որ վերջին 5 տարիների ընթացքում ֆոնդի կառավարչից թղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում չեմ ստացել, մինչդեռ նախագծի հիմնավորումից պարզ է դառնում, որ իմ դեպքում ֆոնդի կառավարիչը, չկատարելով օրենքով սահմանված պարտավորությունը, ստացել է գործառնական ծախսերի համար փոխհատուցում: Հուսամ՝ Կենտրոնական բանկը հրապարակային պարզաբանում կտա փաստացի չկատարված ծանուցումների եւ գանձվող գումարների մասով:

2. 2022 թվականի մայիսի դրությամբ պարտադիր կուտակային գումարների 98 տոկոսը ներդրված է պահպանողական ֆոնդերում. երբ քաղաքացիները (մասնակիցները) չեն ընտրում ֆոնդի տեսակը, համակարգն ինքնաշխատ եղանակով ընտրում է պահպանողական ֆոնդը, որը ենթադրում է, որ պետք է միջին ռիսկայնություն ունենալ: Օրենքի նախագծով նախատեսվում է պահպանողական կենսաթոշակային ֆոնդերի դեպքում մեծացնել բաժնային արժեթղթերում ներդրումների մասնաբաժինը, այսինքն՝ ավելի ռիսկայն կդառնան պահպանողական ֆոնդերը, քանի որ, ի տարբերություն ավանդների եւ պարտատոմսերի, բաժնետոմսերի ռիսկայնությունը անհամեմատ բարձր է:

3. 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում, ներքին եւ արտաքին գործոններով պայմանավորված, կուտակային ակտիվների արժեքը նվազել է 9-10 տոկոսով: Փաստացի, այս օրենքի նախագծով Կենտրոնական բանկը նախատեսում է էլ ավելի բարձրացնել ֆոնդերի կառավարիչների՝ ներդրումներ կատարելու ռիսկայնությունը: ԿԲ-ի կողմից հնարավորություն է տրվում կենսաթոշակային ֆոնդերին ուղղակիորեն ներդրումներ իրականացնել Հայաստանի Հանրապետության տնտեսության իրական հատվածում տարբեր ֆինանսական գործիքների միջոցով, այսինքն՝ շարքային քաղաքացիների կուտակած գումարներով ֆոնդի կառավարիչը կարող է հայաստանյան մասնավոր ընկերությունների բաժնետոմսեր կամ պարտատոմսեր ձեռք բերել, որոնք չունեն որեւէ երաշխիք:

4. Օրենքի նախագծի համաձայն՝ որոշ արտասահմանյան պետություններում ներդրումների համար նախատեսվում է ավելի բարձր սահմանաչափ՝ 15 տոկոսի փոխարեն 30 տոկոս սահմանել, այսինքն՝ ֆոնդի կառավարիչը քաղաքացիների կուտակած գումարի 30 տոկոսը, ԿԲ-ի թույլտվությամբ, կարող է ներդնել մեկ արտասահմանյան երկրում: Հիշեցնեմ, որ Հայաստանում գործող երկու ֆոնդերի կառավարիչները հանդիսանում են ֆրանսիական եւ գերմանական կորպորացիաների դուստր ընկերություններ, հետեւաբար ստացվում է, որ նրանք կարող են հայատանցիների կուտակած գումարները ներդնել իրենց երկրներում եւ նպաստել իրենց երկրների զարգացմանը»,- գրել է նա:

ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱԶԳԵՍՏԻ ՆՈՐ ՁԵՎ ԿՀԱՍՏԱՏՎԻ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության բարեփոխումների համատեքստում մաքսային ծառայության համազգեստի նոր ձեւ կհաստատվի: Այս մասին տեղեկանում ենք Կառավարության նիստի չզեկուցվող հարցերից:

Դիզայնի օժանդակ ծառայությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նախատեսում է ձեռք բերել «Ֆըրսթ քլաս» սահմանափակ պատասխանատվության ընկերությունից, քանի որ նշված կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում Վահան Խաչատրյանը, որը սովորել է Իտալիայի նորաձեւության ակադեմիայում, աշխատել է Իտալիայում՝ համաշխարհային ճանաչում ունեցող հագուստի մոդելավորման տներից մեկում՝Dolce & Gabbana SRL, Alta Moda style, բացի այդ, վերոնշյալ կազմակերպության գործադիր տնօրենը նաեւ ունի սեփական հագուստի ապրանքանիշ՝ ավելի քան 10 տարվա պատմությամբ: Տվյալ կազմակերպության ընտրությունը պայմանավորված է մաքսային ծառայության համազգեստի մոդելների նախագծերի օգտագործմամբ մաքսային ծառայության համազգեստի արտադրության փուլում ակնկալվող որակյալ արդյունքի ստացմամբ: Միաժամանակ, նշենք, որ մաքսային ծառայության համազգեստի նոր ձեւ հաստատելու նպատակով դիզայնի օժանդակ ծառայության համար գումարը կազմում է 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, եւ ելնելով վերոնշյալ իրավակարգավորման պահանջից՝ վերոնշյալ աշխատանքները նախատեսվում է հասցնել ավարտին սեղմ ժամկետներում, այն է՝ կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ առավելագույնը տասնօրյա ժամկետում: Կառավարությունը հայտնում է, որ մեկ անձից է գնումն արվելու, քանի որ այդպիսի կարճ ժամկետն այլ տարբերակով չի պահպանվի: Այսպիսով, կկազմվի ամառային ու ձմեռային տոնական, ինչպես նաեւ ամառային ու ձմեռային ամենօրյա հագուստի էսքիզ:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԼՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԹԱՎՇՅԱ ԲԱՐՁԻ ՏԱԿ ՓՇԵՐ ԷԻՆ

Այս ծանր օրերին հայկական շոուբիզնեսի ներկայացուցիչների առօրյան եւս փոխվել է. վերջիներս «Ինստագրամ» սոցիալական ցանցի Stories բաժնում հեսաֆրֆիր գրառումներ են արել, որում անդրադարձել են լռության անհրաժեշտությանը:

Այսպիսով, դերասանուհի, հաղորդավարուհի Նազենի Հովհաննիսյանը գրել է. «Ընդհանրապես ու արդեն քանի տարի պետք էր գոնե մի պահ լռել՝ հասկանալու համար ագրեսիայի, ատելության ու անհագ վրեժի էս տարօրինակ մոլուցքը երբ կուրացրեց մարդկանց: Փափուկ, թավշյա բարձի տակ, պարզվեց, փշեր էին միայն, որ արյունլվիկ արեցին ուղեղները... Ուղեղները... Լռության մեջ կարող են միայն սովորել նորից լսել, հասկանալ, վերլուծել: Կարեւորը սովորել լսել նախ ինքդ քեզ: Մենք անգամ մեզ չենք ճանաչում, չենք հասկանում: «Կույր» մարդն ուրիշի ցավն ինչպե՞ս տեսնի, եթե ինքն իր հիվանդությունը չի տեսնում...»:

Լռելու կարեւորության մասին իր մտքերով է կիսվել նաեւ պարուհի, դերասանուհի Մանո Գրիգորյանը, ով արդեն մի քանի տարի է, ինչ բնակվում է Միացյալ Նահանգներում: «Երեւի մի օր.. Մենք՝ բոլորս, երեւի մի օր կսովորենք լռել, կհասկանանք՝ լինում են դեպքեր, երբ հազարավոր բառերի փոխարեն անհրաժեշտ է ուղղակի լռել: Կհասկանանք, որ կորուստն ավելի շատ լռությամբ է պետք հարգել: Կհասկանանք, որ վայնասունը, բազմահաչն ու գոռգոռցները հարգելու ու կարեկցելու տարբերակ չեն: Ու երեւի մի օր կհասկանանք, որ պետք չէ սպասել մահի, որպեսզի բոլորով սկսենք խոսել, փոսթեր անել ու հոգոցներ հանել: Ու դրան հակառակ՝ մենք լռում ենք, երբ լռելու իմաստ չկա: Լռում ենք, որովհետեւ մեզ մեկ է, մենք անտարբեր ենք, մեր դուռը չեն ծեծել: Մենք խառնել ենք տեղերը խոսքի եւ լռության, բայց երեւի մի օր...», - գրել է Մանոն:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԻՏՈՒՄՆԱՎՈ՞Ր Է ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՅԱՑՐԵԼ

Այսօրվա օպերային թատրոնի ղեկավարությունը հանդիսատեսին զրկում է Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հիմքի վրա բեմադրված «Ջույգ արեգակներ» բալետը դիտելուց:

Այս բալետը հավերժության մեջ ներկայացնում է այն համամարդկային արժեքները, որոնցով հայ ազգը մասնակցել է եւ շարունակելու է մասնակցել համաշխարհային փիլիսոփայության, արվեստի հարստացման գործընթացին: Նարեկացու վերերկրյա խոսքի յուրահատուկ ռիթմերը, Ռոսլինի մանրանկարչության կոմպոզիցիոն եւ գունային համադրությունները, Արշիլ Գորկու ինքնատիպ մտածողությունը թելադրում են ժամանակակից խորեոգրաֆիկ լուծումներ՝ ամբողջացվելով Մաշտոցի, Նարեկացու, Խաչատրյանի, Ալան Հովհաննեսի, Բաբաջանյանի, Տերտերյանի եւ Աշոտ Արիյանի երաժշտությամբ:

«Ջույգ արեգակներ»-ը հայկական բացառիկ արժեքները ներկայացնող միակ արվեստի գործն է, որը ընդունվել է եվրոպական մշակութային հանրության կողմից: Ցուցադրվում է 60 միլիոն հետեւորդ ունեցող ֆրանսիական MEZZO TV-ով, ներկայացվել է Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ, հյուրախաղերով հանդես գալու շուրջ դրական ելքով բանակցություններ են իրականացվել Վիեննայում Volksoper-ի հետ, անրադարձ է եղել TV TOKYO-ի եթերում, լուսաբանվել է բազմաթիվ լրատվամիջոցների կողմից:

Միտումնավո՞ր է թատրոնի տնօրինությունը այս որոշումը կայացրել, թե՞ ոչ, անձո՞վ է պայմանավորված, թե՞ ոլորտի վերադասի կողմից կարգադրանքով. բոլոր դեպքերում այս վերաբերմունքը հայկական արվեստի հանդեպ անկարելի է բացատրել:

Շարունակելի….

ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Իտալիայում ՀՀ դեսպանության հետ համագործակցությամբ օգոստոսի սկզբին «Ճանապարհ՝ հիշատակի ուղի» ծրագրի շրջանակում «Ճանապարհ» եռյակը Իտալիայի մի շարք քաղաքներում տվել է Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված մի շարք համերգներ (Վենետիկ, Միլան՝ 2 համերգ, Հռոմ): «Այս ծրագիրը մշակութային-սպորտային միջոցառում է՝ կազմակերպված Մարսելի Ֆրանսահայ երտասարդաց միության՝ JAF-ի եւ «Վազք հիշատակի համար» CPLM կազմակերպության կողմից: Մտահղացման հեղինակը երաժիշտ Միքայել Վեմյանն է՝ JAF-ի երաժշտական դպրոցի պատասխանատուն եւ նվագախմբի ղեկավարը:

Ծրագրի նպատակն է Մարսելից քայլել մինչեւ Երեւան՝ 2500կմ ոտքով կտրելանցնելով Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանն ու Հայաստանը: Քայլարշավը, ինչպես նաեւ այս ճանապարհին տրվող բոլոր համերգները նվիրված են Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ «Ճանապարհ՝ հիշատակի ուղի» ծրագրի շրջանակում եռյակի կողմից մի շարք համերգներ են նախատեսվում նաեւ Հունաստանում եւ Հայաստանում:

ԼՈՒՐԵՐ

ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՎԱՔ

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների հավաքականը օգոստոսի 18-24-ը մարզական հավաք կանցկացնի ՀՖՖ տեխնիկական կենտրոն/ֆուտբոլի ակադեմիայում: Հավաքի շրջանակում թիմը օգոստոսի 22-ին եւ 24-ին երկու ընկերական հանդիպում կանցկացնի Լիտվայի Մ-19 հավաքականի հետ:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ

«Վուլվերհեմփթոնը» ռեկորդային տրանսֆեր է իրականացրել ակումբի պատմության մեջ: Անգլիական թիմը պորտուգալական «Սպորտինգի» կիսապաշտպան Մատեուշ Նունեշի համար վճարել է 45 միլիոն եվրո: Հետագայում հնարավոր է նաեւ 5 միլիոն եվրո բոնուս: 23-ամյա պորտուգալացի ֆուտբոլիստը կնքել է 5 տարվա պայմանագիր՝ եւս 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ: Մատեուշ Նունեշի ծառայություններով հետաքրքրված էին նաեւ Անգլիայի չեմպիոն «Մանչեսթեր Սիթին» ու փոխչեմպիոն «Լիվերպուլը»: Պորտուգալիայի անցած առաջնությունում Մատեուշ Նունեշը մասնակցել է 33 հանդիպման, խփել 3 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

ԿԳՆԻ ԱԿՈՒՄԲԸ

Բրիտանացի գործարար, միլիարդատեր Ջիմ Ռեթքլիֆը մտադիր է ձեռք բերել «Մանչեսթեր Յունայթեդը», եթե Գլեյզերների ընտանիքը որոշի վաճառել ֆուտբոլային ակումբը: Անգլիական մամուլը գրել էր, որ Գլեյզերների ընտանիքը որոշել է վաճառել ակումբի բաժնետոմսերի մի մասը: 69-ամյա Ջիմ Ռեթքլիֆը քիմիական արդյունաբերության հսկաներից INEOS-ի սեփականատերն է: Ջիմ Ռեթքլիֆը 2019 թվականին 100 միլիոն եվրոյով ձեռք է բերել ֆրանսիական «Նիցա» ակումբը:

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Իսպանացի Ռաֆայել Նադալը չկարողացավ դուրս գալ ԱՄՆ-ի Ցինցինատի քաղաքում անցկացվող «Մասթերս» շարքի մրցաշարի երրորդ շրջան: Աշխարհի երրորդ ռակետը մրցեց Խորվաթիայի ներկայացուցիչ, աշխարհի 152-րդ ռակետ Բորնա Չորիչի հետ եւ պարտություն կրեց 6:7 (9), 6:4, 3:6 հաշվով: Մրցախաղը տեւեց 2 ժամ եւ 54 րոպե: Ուիմբլդոնի մրցաշարի կիսաեզրափակիչի հանդիպումից որովայնի մկանների վնասվածքի պատճառով հրաժարվելուց հետո Նադալն առաջին անգամ էր մասնակցում մրցաշարի՝ պատրաստվելով ԱՄՆ-ի բաց առաջնությանը, որը կանցկացվի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 11-ը Նյու Յորքում: Ցինցինատիի մրցաշարի մրցանակային հիմնադրամը 6,2 միլիոն դոլար է:

ԳԱՎԱԹԱԿԻՐ

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդը» հույս ունի այս շաբաթ ձեռք բերել Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր «Ռեալի» բրազիլացի խաղացող Կազեմիրոյին: Բանակցությունները շարունակվում են: Արքայական ակումբը չի կանխի տեղափոխությունը, եթե 30-ամյա հենակետային կիսապաշտպանը ցանկանա փոխել ակումբը: Կազեմիրոն 2013 թվականից է հանդես գալիս «Ռեալում», որի հետ դարձել է Չեմպիոնների լիգայի հնգակի գավաթակիր:

● *Օգոստոսի 27-ին Երեւանի գեղասահքի եւ հոկեյի մարզադպրոցում տեղի կունենա «Ձյունե թագուհին» մյուզիքլը: Տոմսերի արժեքը՝6000-30.000 դրամ: Սկիզբը՝ժանը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կերակրողին կորցնելու դեպքում ինչպե՞ս է հաշվարկվում կենսաթոշակը:

Մարինե Մինասյան (22 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը ընտանիքի՝ այդ կենսաթոշակի իրավունքն ունեցող անդամներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է հետեւյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափին գումարվում է մահացած կերակրողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթոշակի աշխատանքային մասի 50 տոկոսը:

Երկու ծնողին կորցրած մինչեւ 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է հետեւյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափի հնգապատիկին գումարվում է մահացած յուրաքանչյուր ծնողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթոշակի աշխատանքային մասի 50 տոկոսը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝ յուրաքանչյուր երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող մինչեւ 26 տարեկան զավակի համար մահացած կերակրողի՝

ա. 20 եւ ավելի տարվա զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում՝ առկա ստաժով հաշվարկվող երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 60 տոկոսի չափով,

բ. 20 տարուց պակաս զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում՝ մահացած կերակրողի վերջին զինծառայության պաշտոնը զբաղեցրած, նույն զինվորական կոչումն ունեցող եւ 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի համար հաշվարկվող երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 60 տոկոսի չափով:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում կարող են խնամվել քրոնիկ հոգեկան հիվանդությամբ կամ խոր մտավոր հետամնացությամբ հաշմանդամություն ունեցող կամ ծերունական փսիխոզով կամ ծանր արտահայտված սկլերոզով հիվանդ անձինք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին (այսուհետ՝ տարածքային մարմին), որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում կարող են խնամվել քրոնիկ հոգեկան հիվանդությամբ կամ խոր մտավոր հետամնացությամբ հաշմանդամություն ունեցող կամ ծերունական փսիխոզով կամ ծանր արտահայտված սկլերոզով հիվանդ անձինք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Գեղարքունիքի մարզում

Վարդենիս խոշորացված համայնքի Շատջրեք վարչական շրջանում նախկին «Հայփոստ»-ի շենքի տանիքում, հրդեհ է բռնկվել: Հրշեջները մարել են կրակը, տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.08.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: